ՀՀ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ
ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ
ՆՅՈՒԹԱՏԵԽՆԻԿԱԿԱՆ
ԱՊԱՀՈՎՄԱՆ ԳԼԽԱՎՈՐ
ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ՊԵՏ

THE HEAD OF THE GENERAL DEPARTMENT
OF LOGISTIC SUPPORT OF MINISTRY OF
DEFENCE OF THE REPUBLIC OF ARMENIA
НАЧАЛЬНИК ГЛАВНОГО УПРАВЛЕНИЯ
МАТЕРИАЛЬНО-ТЕХНИЧЕСКОГО
ОБЕСПЕЧЕНИЯ МИНСТЕРСТВА
ОБОРОНЫ РЕСПУБЛИКИ АРМЕНИЯ

0044, ք.Երևան, Բագրևանդի փ.5
E-mail: depart@mil.am
Հեռ.՝ (+374 10) 29-43-97

5 Bagrevand str., 0044 Yerevan
Ереван, 0044, Багреванда 5,
E-mail: depart@mil.am
Tel.Тел. (+374 10) 29-43-97

№ ԵՄԱԿ/616
«22» 02 2021թ.

«Հ.Ա.Ն.Ս.-Ֆուդ» ՍՊԸ (ՀՎՀՀ 01401456) տնօրենին
հասցե՝ ՀՀ, ք. Երևան, Դավիթաշեն 2-րդ թաղ, 43շ, բն. 4
էլ. հասցե՝ h.a.n.s.-food1@mail.ru

ՀՀ պաշտպանության նախարարության և «Հ.Ա.Ն.Ս.-Ֆուդ» ՍՊԸ-ի միջև 20.02.2019թ. կնքված ԲՄԱՊՁԲ-7/2-1 գնման պայմանագրին կից 18.03.2020թ կնքված N 2 համաձայնագրի և 13.07.2020թ կնքված փոխադարձ համաձայնությամբ լուծելու մասին համաձայնագրի (այսուհետև՝ Համաձայնագիր) շրջանակներում Ձեր ընկերությունը 2020թ. օգոստոս ամսին պետք է մատակարարեր 7200 կգ պահածոյացված բանջարեղեն (Խավիար), որից չի մատակարարել 835.92 կգ պահածոյացված բանջարեղեն (Խավիար),հոկտեմբեր-նոյեմբեր ամիսներին պետք է մատակարարեր 14400 կգ պահածոյացված բանջարեղեն (Խավիար), սակայն չի մատակարարել:

ՀՀ պաշտպանության նախարարությունը 2021թ. հունվարի 22-ին միակողմանի մասնակի լուծել է Համաձայնագիրը վերը նշված ապրանքների մասով /լուծման մասին ծանուցումը հրապարակվել է gnumner.am կայքում 25.01.2021թ./, սակայն հաշվի առնելով ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի թիվ ՍՅ-ՆԳ-2021/28 որոշումը՝ ՀՀ պաշտպանության նախարարությունը 2021թ. փետրվարի 22-ին միակողմանի մասնակի լուծել է նաև N ԲՄԱՊՁԲ-7/2-1 պայմանագիրը վերը նշված ապրանքների մասով՝ հիմք ընդունելով N ԲՄԱՊՁԲ-7/2-1 գնման պայմանագրի 2.1.7.1 կետի բ) ենթակետի պահանջները:

Եթե 22.01.2021թ, ՆՏԱ/183 ծանուցմամբ սահմանված ժամկետում և կարգով «Հ.Ա.Ն.Ս.-Ֆուդ» ՍՊԸ-ն չի կատարել տույժերի և պայմանագրի կատարման ապահովման տուժանքի հետ կապված պարտավորությունները, ապա տեղեկացնում եմ, որ «Հ.Ա.Ն.Ս.-Ֆուդ» ՍՊԸ-ն պարտավոր է սույն ծանուցումը ստանալուց հետո 5 (հինգ) բանկային օրվա ընթացքում ՀՀ ֆինանսների նախարարության կողմից բացված գանձապետական 900005028106 հաշվեհամարին փոխանցել 309880 ՀՀ դրամ որպես տույժ՝ Պայմանագրի 6.2 կետի համաձայն, ինչպես նաև վերոնշյալ ժամկետում ՀՀ ֆինանսների նախարարության կողմից բացված գանձապետական 900005000758 հաշվեհամարին ենթակա է գանձման 3529532 ՀՀ դրամ որպես տուժանք՝ պայմանագրի կատարման ապահովում (պայմանագրի ընդհանուր գումարի 10 %-ը):

Ն. ՅՈՒԶԲԱՇՅԱՆ